ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան	24.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/271

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Մասնակից՝ «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-22/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 31.05.2022թ.-ի թիվ 26/26-1/10022-2022 գրությամբ «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 31.05.2022թ.-ի թիվ 04/35/12624-2022 գրության հիման վրա, 31.05.2022թ.-ին «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 31.05.2022թ.-ին:

01.06.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/271 համարի ծածկագիրը:

08.06.2022թ.-ին և 24.06.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.06.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.06.2022թ.-ին:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 31.05.2022թ.-ի թիվ 04/35/12624-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից 2022 թվականի մայիսի 16-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/25» ծածկագրով կազմակերպված կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների գնման գործընթացին հայտ են ներկայացրել՝ «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի և «Նոր Վան Շին» ՍՊԸ-ն 2-րդ, 8-րդ չափաբաժինների համար, որոնց 2022 թվականի մայիսի 23-ին առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն դրանք ամբողջությամբ չեն շտկվել և գնահատող հանձնաժողովի կողմից վերջիններիս հայտերը մերժվել են:

Ելնելով վերոգրյալից, սփորև ներկայացնում եմ վերոնշյալ մասնակցի վերաբերյալ տվյալները և համապատասխան հիմքերը /կցվում են/ և խնդրում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա/ մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում հաշվառել տեղեկատվությունը՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/25» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 01.06.2022թ.-ի գրությամբ դիմել է «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.05.2022թ.-ի թիվ 26/26-1/10022-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ն նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) 31.05.2022թ. թիվ 04/35/12624-2022 գրությամբ (այսուհետ՝ Գրություն) դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար: Պատվիրատուն Գրությամբ հայտնել է, որ 2022 թվականի մայիսի 16-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/25» ծածկագրով կազմակերպված կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների գնման գործընթացին (այսուհետ նաև՝ Մրցույթ) հայտ է ներկայացրել՝ «Ռ.Հովհաննիսյան»

ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի համար, ում 2022 թվականի մայիսի 23-ին առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունը, սակայն դրանք ամբողջությամբ չեն շտկվել և գնահատող հանձնաժողովի կողմից վերջինիս հայտը մերժվել է, ինչից ելնելով Պատվիրատուն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն սույն ընթացակարգը նախաձեռնելու համար: Հարկ է նշել, որ Ընկերության հայտը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ ըստ Պատվիրատուի 1-ին չափաբաժնի համար ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում նշված գումարները սխալ են հաշվարկված:

Չնայած Պատվիրատուի հայտնածին, վերջինիս կողմից Գրությամբ Նախարարություն ուղարկված նյութերում բացակայում են հայտի շտկման վերաբերյալ Ընկերությանը պատշաճ ծանուցելու համգամանքը ապացուցող փաստերը, այն է՝ Գրությանը կցված չէ www.armeps.am էլեկտրոնային համակարգից Ընկերությանն ուղարկված հայտի շտկման մասին ծանուցումը: Նշենք, որ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպված գնումների ժամանակ Պատվիրատուն գնման ընթացակարգին վերաբերվող ծանուցումները պետք է ուղարկի էլեկտրոնային համակարգի միջոցով, փվյալ դեպքում www.armeps.am համակարգից: Սակայն ինչպես արդեն նշեցիք, սույն ընթացակարգը նախաձեռնելու համար Նախարարություն ուղարկված նյութերում բացակայում է www.armeps.am էլեկտրոնային համակարգից Ընկերությանն ուղարկված հայտի շտկման մասին ծանուցումը: Ինչը ողջամտորեն ենթադրում է, որ հայտի շտկման վերաբերյալ ծանուցումը www.armeps.am համակգից Ընկերությանը չի ուղարկվել, այսինքն՝ հայտի շտկման վերաբերյալ Ընկերությունը պաշաճ չի ծանուցվել:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ էլեկտրոնային գնումների www.armeps.am համակարգի միջոցով ծանուցում ուղարկել նախատեսելը ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների սահմանմանն ու իրագործմանը և հետապնդում է իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության միջոց:

Այսպիսով՝ վերագրյալից կարող ենք փաստել, որ Պատվիրատուն հայտի շտկման վերաբերյալ ծանուցումը Ընկերությանը www.armeps.am համակարգի միջոցով չի ուղարկել, ուստի հայտը շտկելու և շտկված հայտը Պատվիրատուին ուղարկելու պարտականություն Ընկերության մոտ չէր կարող առաջանալ, քանի որ վերջինս օրենքով սահմանված կարգով

այդ հանգամանքի վերաբերյալ չի ծանուցվել: Հետևաբար, հայտի շտկման վերաբերյալ պատշաճ ծանուցված չլինելու պայմաններում գնման ընթացակարգի հայտերի բացումից հետո Ընկերության կողմից սկզբնապես ներկայացված հայտից բացի Պատվիրատուին ուղարկված այլ նյութերը, ինչպիսին է նաև Մրցույթի շրջանակներում ուղարկված ծվալաթերթ-նախահաշիվը չեն կարող դիտվել որպես հայտի շտկում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված Կարգի 41-րդ և 42-րդ կետերի իմաստով: Որպիսի հանգամանքներում նման նյութերը, այդ թվում՝ ծավալաթերթ - նախահաշիվը հրավերին չհամապատասխանելու դեպքում չեն կարող հիմք հանդիսանալ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար: Հետևաբար, Ընկերության կողմից Պատվիրատուին ուղարկած ծավալաթերթ-նախահաշվի անհամապատասխանությունը հրավերին չի կարող հիմք հանդիսանալ Ընկերության հայտը մերժելու և վերջինիս Ցուցակում ներառելու համար: Քանի որ Կարգի 42-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ միայն Կարգի 41-րդ կետով սահմանված ձևով ուղարկված ծանուցմանն ի պատասխան կատարված հայտի շտկման անհամապատասխանության դեպքում է, որ մասնակցի հայտը ենթակա է մերժման:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը բացակայում են: Հետևաբար, խնդրում ենք Ընկերությանը չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված խախտումը

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Ռ. Հովհաննիսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ԼՕ-2022/271 ծածկագրով ընթացակարգը:»:

4. <u>ՍՑ-LO-2022/271 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունի կողմից կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.05.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/25» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 16.05.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 6.6-րդ կետի համաձայն՝ «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի մասնակցության հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ բացակայում են լրացված ծավալաթերթ-նախահաշիվները:

v. Արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցումը 23.05.2022թ.-ին armeps.am համակարգի միջոցով ուղարկվել է Մասնակցի hovhannisyanruben@rambler.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

vii. Արձանագրության 8.2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը 30.05.2022թ.-ին շարունակելով նիստը արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկվել են 2-ից 8-րդ չափաբաժինների մասով, իսկ 1-ին չափաբաժնի համար ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում սխալ են հաշվարկված առանձին աշխատանքների ընդհանուր արժեքները, ինչպես նաև առանձին բաժինների ընդհանուր գումարները, ինչից ելնելով ճշտման

արդյունքում ստացվող ընդամենը գումարը չի համապատասխանում Հավելված 2-ին՝ գնային առաջարկին:

viii. Արձանագրության 9.3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.05.2022թ.-ի թիվ 26/26-1/10022-2022 գրությամբ «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի

կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունի կողմից կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային

ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով

կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունի կողմից կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.05.2022թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.05.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 6.6-րդ կետով արձանագրվել է, որ «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի մասնակցության հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ բացակայում են լրացված ծավալաթերթ-նախահաշիվները, ինչով պայմանավորված արձանագրության 7-րդ կետով Հանձնաժողովը որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցումը 23.05.2022թ.-ին armeps.am համակարգի միջոցով ուղարկվել է Մասնակցի hovhannisyanruben@rambler.ru էլեկտրոնային փոստի հասցեին: Արձանագրության 8.2-րդ կետով Հանձնաժողովը 30.05.2022թ.-ին շարունակելով նիստը արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկվել են 2-ից 8-րդ չափաբաժինների մասով, իսկ 1-ին չափաբաժնի համար ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում սխալ են հաշվարկված առանձին աշխատանքների ընդհանուր արժեքները, ինչպես նաև առանձին բաժինների ընդհանուր գումարները, ինչից ելնելով ճշտման արդյունքում ստացվող ընդամենը գումարը չի համապատասխանում Հավելված 2-ին՝ գնային առաջարկին, ինչով պայմանավորված արձանագրության 9.3-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների

խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/25» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.05.2022թ.-ի թիվ 26/26-1/10022-2022 գրությամբ «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/271 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ռ.Հովհաննիսյան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**